

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի 2012 թվականի սեպտեմբերի 16-ի խորհրդի նիստի

Օրակարգ`

1. Մագիստրատուրայի դասընթացների և գիտական սեմինարի կազմակերպման մասին հարցը
2. Երրորդ կուրսերի ուսումնական պրակտիկայի արդյունքների ներկայացում
3. Առաջին լուծարային շրջանի ընթացքի մասին
4. Ընթացիկ հարցեր

Նիստին մասնակցում էին 17 անդամներ:

1. Լսեցին Մագիստրատուրայի դասընթացների և գիտական սեմինարի կազմակերպման մասին /Զեկուցողներ՝ Ս. Ամիրխանյան, Մ. Հերզնյան/

Ներկայացվեց, որ երեք մասնագիտությունների գծով մագիստրատուրայի դասընթացները պատշաճ սկսելու համար պատրաստ է դասացուցակը, ուսանողները և դասախոսները տեղյակ են իրենց ծանրաբեռնվածությանը: Դասացուցակն արդեն տեղակայված է ԳՊՀ կայքում:

Արտահայտվեցին Մ. Հերզնյանը, Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Ն. Թադևոսյանը, Ա. Ղարաբաղյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին Գիտական սեմինարը կազմակերպել կիսամյակի ընթացքում: Այն անցկացնելու համար հրավիրել ոչ միայն տեսաբան գիտնականներ, այլև պրակտիկ ոլորտի մասնագետներ:

2. *Լսեցին* 2011-2012 ուսումնական տարվա երրորդ կուրսերի ուսումնական պրակտիկայի արդյունքների մասին հարցը /Զեկուցողներ՝ Գ. Խաչատրյան, Ս. Հակոբյան, Ն. Խանդանյան/

Երեք մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկայի ղեկավարները ներկայացրեցին պրակտիկայի ընթացքն ու արդյունքները, ուսանողների կողմից արված դիտողությունները և առաջարկությունները:

Արտահայտվեցին Հ. Չաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզնյանը. Գ. Խաչատրյանը, Վ. Առաքելյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին հաշվի առնելով պրակտիկայի անհրաժեշտությունը հնարավորինս հաճախակի կազմակերպել պրակտիկ գիտելիքները հարստացնելու միտված այցեր տարբեր բնույթի կազմակերպություններ՝ ներառելով ծառայությունների ոլորտը, արտադրական ձեռնարկություններ, բանկեր:

3. *Լսեցին* Ֆակուլտետում լուծարային շրջանի ընթացքի մասին հարցը /Ջեկուցողներ՝ Ս. Ամիրխանյան, Մ. Հերզնյան/

Ներկայացվեց, որ առաջին լուծարային շրջանը ընթացքի մեջ է, առարկայական պարտքերի մարման ժամանակացույցը տեղակայված է ԳՊՀ կայքում, ուսանողները առարկայական պարտքերը հանձնում են առարկայական հանձնաժողովին:

Արտահայտվեցին Մ. Հերզնյանը, Հ. Չաքոյանը, Հ. Ղուլոյանը. Գ. Խաչատրյանը, Ս. Բագոյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին, որ դեկանատը և երեք մասնագիտությունների գծով համապատասխան ամբիոնները հետևողականություն դրսևորեն առարկայական պարտքերի հանձման գործընթացում, անհատական աշխատանքներ կատարեն վատ սովորող ուսանողների հետ:

4. *Լսեցին* ընթացիկ հարցեր

Ս. Ամիրխանյանը կարևորեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստումը սեպտեմբեր ամսից սկսած և ամբիոնների ուշադրությունը հրավիրեց այդ գործընթացին, նշեց ամենօրյա ուշադրության անհրաժեշտությունը:

Խորհրդի նախագահ՝ Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝ Ն. Խանդանյան